| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Է. ՌՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

<u>Օրակարգ-9</u>

**9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/**

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է աճուրդով օտարել Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության երք կտոր 0,0400 հա մակերեսով հողամասեր՝ բնակելի տուն և բնակելի օժանդակ շինություններ կառուցելու համար:

Համաձայն <<ՍՈՒԱՐ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված հողամասի շուկայական արժեքի գնահատման 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15. 09. 25/05 հաշվետվության օտարման ենթակա համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շուկայական արժեքի գնահատման 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15. 09. 25/01, 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15. 09 . 25/03, 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15. 09. 25/04, հաշվետվություններով՝

1. 08-003-0017-0037 կադաստրային ծածկագրով 0,040 հա հողամասի շուկայական արժեքը գնահատվել է 900 000 ՀՀ դրամ.

2. 08-003-0020-0222 կադաստրային ծածկագրով 0,040 հա հողամասի շուկայական արժեքը գնահատվել է 950 000 ՀՀ դրամ.

3. 08-003-0020-0212 կադաստրային ծածկագրով 0,040 հա հողամասի շուկայական արժեքը գնահատվել է նույնպես 950 000 ՀՀ դրամ.

Ավագանու որոշման նախագծով նշված երեք կտոր հողամասերի աճուրդով օտարման մեկնարկային գին է սահմանվել գնահատված շուկայական արժեքով:

| N | Հողամասի գտնվելու վայրը, հասցեն | Հողամասի ծածկագիրը, Վկայական N | Հողամասի մակերեսը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Օտարման նպատակը | Տվյալ հողամասի մեկ հեկտարի կադաստրային արժեքը (ՀՀ դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Աճուրդի նախավճարի չափը՝ մեկնարկային գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Նոր թաղամասի 5-րդ փողոց1-ին նրբանցքի 9 հողամաս | 08-003-0017-0037, N 18072025-08-0003 | 0,04 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցում | 7 920 000 | 284 | 900 000 | 50.0 |
| 2. | մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց, 24/3 հողամաս | 08-003-0020-0222, N 10062025-08-0037 | 0,04 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցում | 7 920 000 | 300 | 950 400 | 50.0 |
| 3. | մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հ. Շիրազի փողոց, 22/5 հողամաս | 08-003-0020-0212, N 18112024-08-0004 | 0,04 | Բնակավայրերի | Բնակելի կառուցապատման | Բնակելի տան և օժանդակ շինությունների կառուցում | 7 920 000 | 300 | 950 400 | 50.0 |

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք է ընդունելով <<ՍՈՒԱՐ>> ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասերի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունները:

Քննարկման արդյունքում կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի, <<Գնահատման գործունեության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով <<ՍՈՒԱՐ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված հողամասերի շուկայական արժեքի գնահատման 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15.09.25/01, 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15.09.25/03, 2025 թվականի սեպտեմբերի 19-ի ԱԳ-15.09.25/04, հաշվետվությունները /Վկայական N ԳԳ-2023-53, տրված՝ <<19>> սեպտեմբերի 2023 թվական/.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության սույն որոշման հավելվածում նախատեսված երեք կտոր հողամասերը օտարել աճուրդով:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

| | | | |
|---|---|---|---|
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | ------------- | ------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |

Հավելվածը կցվում է արձանագրությանը:

Օրակարգի 10-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հարություն Համբարյանին,

Խնդրեմ պարոն Համբարյան

**Օրակարգ-10**

**10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 108-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հարություն Համբարյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի 303 քառակուսի մետր մակերեսով տարածքը անհատույց, տաս տարի ժամկետով <<Հայ առաջադեմ երիտասարդություն>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին>> N 108-Ա որոշումը, հաշվի է առնվել <<Հայ առաջադեմ երիտասարդություն>> հասարակական կազմակերպության գործունեության ուղղությունները և տարածքի տրամադրման ոչ նպատակահարմությունը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 4-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 37-րդ հոդվածի դրույթներով:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 108-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 28-րդ հոդվածի 4-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի N 108-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի 303 քառակուսի մետր մակերեսով տարածքի անհատույց, տաս տարի ժամկետով <<Հայ առաջադեմ երիտասարդություն>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու ոչ նպատակահարմությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**
**որոշում է՝**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 12-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող Մարալիկ քաղաքի արվեստի դպրոցի շենքի 303 քառակուսի մետր մակերեսով տարածքը անհատույց, տաս տարի ժամկետով <<Հայ առաջադեմ երիտասարդություն>> հասարակական կազմակերպությանը տրամադրելու մասին>> N 108-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | քվեարկությանը չի մասնակցել | | |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

Օրակարգի 11-14-րդ հարցերը ներկայացնելու համար ձայնը տրվեց համայնքի ղեկավարի տեղակալ Ջորիկ Խաչատրյանին:

**Օրակարգ-11**

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0033-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.001321 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՀԵԿՏՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Ջորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ սեփականության իրավունքով քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին է պատկանող Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 13/1 հասցեում գտնվող /ներկայումս Արկադի տեր-Թադևոսյան փողոց/ ավտոտնակը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0033-0003 կադաստրային ծածկագրով 0. 00363 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /վկայական՝ 2600561, տրված 15. 03. 2011 թ/:

Քաղաքացին դիմել է Անիի համայնքի ղեկավարին իր ավտոտնակին հարակից 13. 21 քառ. մետր մակերեսով անօգտագործելի հողամասը, ավտոտնակի սպասարկման համար, որպես ընդլայնում իրեն օտարելու խնդրանքով:

Որոշման նախագծով նախատեսվում է.

հաշվի առնելով, որ քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 13/1 հասցեում գտնվող /ներկայումս Արկադի տեր-Թադևոսյան փողոց/ ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0033-0003 կադաստրային ծածկագրով 0. 00363 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին հարակից 08-003-0033-0029 կադաստրային ծածկագրով 0. 001321 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 13/6 հողամաս, Վկայական N 18072025-08-0032/, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, այդ հողամաը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0.001321 հեկտար հողամասի համար 10463 /տաս հազար չորս հարյուր վաթսուներեք/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին (անձնագիր՝ AT 0565788, տրված՝ 18.09.2020թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի

համայնք, քաղաք Մարալիկ,Ձերժինսկու փողոց, 13 շենք, բնակարան 24)՝ ավտոտնակի սպասարկման համար:

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0033-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.001321 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՀԵԿՏՈՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը և նկատի ունենալով, որ քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին /հետագայում՝ քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 13/1 հասցեում գտնվող /Ներկայումս Արկադի տեր-Թադևոսյան փողոց/ ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0033-0003 կադաստրային ծածկագրով 0.00363 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին /վկայական՝ 2600561, տրված 15.03.2011 թ/ հարակից 08-003-0033-0029 կադաստրային ծածկագրով 0.001321 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության

հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 13/6 հողամաս/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով քաղաքացու 2025 թվականի հոկտեմբերի 24-ի դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկի փողոցի թիվ 13/1 հասցեում գտնվող /ներկայումս Արկադի տեր-Թադևոսյան փողոց/ ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0033-0003 կադաստրային ծածկագրով 0.00363 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին հարակից 08-003-0033-0029 կադաստրային ծածկագրով 0.001321 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 13/6 հողամաս, Վկայական N 18072025-08-0032/, որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, **0.001321** հեկտար հողամասի համար **10463** /տասս հազար չորս հարյուր վաթսուներեք/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արտակ Հեկտորի Խաչատրյանին (անձնագիր՝ AT 0565788, տրված՝ 18.09.2020թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ,Ձերժինսկու փողոց, 13 շենք, բնակարան 24)՝ ավտոտնակի սպասարկման համար:

2. Նշել, որ

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշիմից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

| | | | |
|---|---|---|---|
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | ------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | ------------- | ------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | քվեարկությանը չի մասնակցել | | |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |

<u>Օրակարգ-12</u>

**12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-008-0102-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 0,007 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում Անի համայնքի Աղին բնակավայրում 2022 թվականին իրականացված <<Անի համայնքի սահմանամերձ Աղին բնակավայրում Սարակապ և Աղին բնակավայրերի խմելու ջրի համար խորքային հորի հորատում և պոմպի տեղադրում>> սուբվեն ծրագիրով Աղին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 08-008-0102-0001- կադաստրային ծածկագրով 0,007 հա մակերեսով հողամասում տեղադրվել է 15 լիտր/վրկ մղող հզորության պոմպակայն, որի արժեքը կազմել է 72,9 մլն. ՀՀ դրամ: Այն նախատեսված է խմելու ջուր մատակարարել Սարակապ և Աղին բնակավայրերին:

Համաձայն բնակավայրի էլեկտրոնային կադաստրային քարտեզի, Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Աղին բնակավայրի գլխավոր հատակագծի և համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասի փաստացի հատակագծի, նշանակությունը փոփոխվող հողամասը հանդիսանում է համայնքի սեփականության գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտ հողատեսքի հողամաս:

Պոմպակայանի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ենթարկելու, էլեկտրական սնուցում ապահովելու, պոմպակայանը գործարկելու և բնակավայրերին խմելու ջուր մատակարարելու համար, անհրաժեշտություն է առաջացել նշված հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն:

Հողի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով կազմված է Լիազոր մարմին ներկայացված փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվա¬կանի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կեղմից 2025 թվականի հոկտեմբերի 8-ի N 2/փ-318 արձանագրությամբ տրվել է դրական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի համաձայն հողի նպատակային նշանակության փոփոխության հաստատումը վերապահված է համայնքի ավագանուն:

Որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-008-0102-0001- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ 0,007 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման

փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի N 2/փ-318 դրական եզրակացությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Հայկաձոր բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Աղին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-008-0102-0001- կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0,007 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի արոտ հողատեսքի հողամասը փոխադրումը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակություն, այդ հողամասում համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի շրջանակներում տեղադրված պոմպակայնի նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

ա) հողամասի նպատակային նշանակության սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված ապահովել հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

գ) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

դ) Սահմանված կարգով և ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 22-րդ և 23-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Հ. ՁԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | քվեարկությանը չի մասնակցել | | |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

<u>Օրակարգ-13</u>

**13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՎՈՎ ՉՈՐՍ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՆ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշման 7-րդ հավելվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավան գյուղական համայնքին սեփականության իրավունքով փոխանցվել են պետական բնակելի ֆոնդը և պետական ոչ բնակելի տարածքները: Իսկ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն միավորված համայնքը համարվում է միավորվող համայնքների իրավահաջորդը:

Որոշման նախագծով նախատեսվում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 4-րդ փողոցի թիվ 25 հասցեում գտնվող 08-022-0009-0016 կադաստրային ծածկագրով 0,12166 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 18 հասցում գտնվող 08-022-0004-0009 կադաստրային ծածկագրով 0,195 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 6 հասցում գտնվող 08-022-0004-0003 կադաստրային ծածկագրով 0,22988 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 3-րդ փողոցի թիվ 13 հասցում գտնվող 08-022-0007-0016 կադաստրային ծածկագրով 0,095 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշման 7-րդ հավելվածը:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՎՈՎ ՉՈՐՍ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՆ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N 51 որոշման 7-րդ հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բագրավան գյուղական համայնքի սեփականության գույքի ցանկը.

***Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 4-րդ փողոցի թիվ 25 հասցում գտնվող 08-022-0009-0016 կադաստրային ծածկագրով 0,12166 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 18 հասցում գտնվող 08-022-0004-0009 կադաստրային ծածկագրով 0,195 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 1-ին փողոցի թիվ 6 հասցում գտնվող 08-022-0004-0003 կադաստրային ծածկագրով 0,22988 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի 3-րդ փողոցի թիվ 13 հասցում գտնվող 08-022-0007-0016 կադաստրային ծածկագրով 0,095 հա հողամասը, նրանում առկա բնակելի տունը և բնակելի օժանդակ շինությունները ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը:

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին.

Սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ գույքերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետական գրանցման ենթարկելու համար:

6. Համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հողամասերի, նրանցում առկա բնակելի տների և բնակելի օժանդակ շինությունների հատակագծերը կցվում են որոշմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Է. ՌՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Հ. ՁԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

| | | | |
|---|---|---|---|
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | ------------- | ------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | քվեարկությանը չի մասնակցել | | |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |

<u>Օրակարգ-14</u>

## 14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավարի տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Զեկուցողը նշեց, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 31-ի N 1047-Ն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի աղյուսակի 429-րդ կետով Անի համայնքի Անիպեմզայի միջնակարգ դպրոցի շենքում նախատեսված է հիմնել նախակրթարան՝ 15 սաների համար:

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից հաստատված Անիպեմզայի միջնակարգ դպրոցի շենքում նախակրթարան հիմնելու <<Միկրոծրագրի բյուջեի>> 5-րդ կետի համաձայն, համայնքին է վերապահված նախակրթարանի դաստիարակի 9 ամսվա աշխատավարձի վճարման ֆինանսավորումը, որից հետո վճարումը կկատարվի պետական բյուջեի միջոցներով:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (Այլ ընթացիկ դրամաշնորհներ) հոդվածից 837000 (ութ հարյուր երեսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել <<Անիպեմզայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը (ամսեկան կտրվածքով՝ 93000 Հայաստանի Հանրապետության դրամ)՝ նախակրթարանի դաստիարակի 9 ամսվա աշխատավարձը վճարելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթներով և հիմք է ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 31-ի N 1047-Ն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի աղյուսակի 429-րդ կետը:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 10-րդ հոդվածի 11-րդ

մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 31-ի N 1047-Ն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի աղյուսակի 429-րդ կետը՝ Անի համայնքի Անիպեմզայի միջնակարգ դպրոցի շենքում նախակրթարան հիմնելու մասին, <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ծրագրի իրականացման գրասենյակ պետական հիմնարկի կողմից հաստատված Անիպեմզայի միջնակարգ դպրոցի շենքում նախակրթարան հիմնելու <<Միկրոծրագրի բյուջեի>> 5-րդ կետը, հաշվի առնելով <<Անիպեմզայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի հունիսի 25-ի գրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Անի համայնքի 2025 թվականի բյուջեի Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 02, դաս 02 (Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4637 (Այլ ընթացիկ դրամաշնորհներ) հոդվածից 837000 (ութ հարյուր երեսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ հատկացնել <<Անիպեմզայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը (ամսեկան կտրվածքով՝ 93000 Հայաստանի Հանրապետության դրամ)՝ նախակրթարանի դաստիարակի 9 ամսվա աշխատավարձը վճարելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | ------------- | ------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | ------------- | ------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | քվեարկությանը չի մասնակցել | | |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | ------------- | ------------- |

Օրակարգում հրատապության կարգով ներառված 15-րդ հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց պարոն Խաչատրյանին:

<u>Օրակարգ-15</u>

**15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ 0.953701 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-100-0065-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,10450 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 207-րդ կետի համաձայն Սառնաղբյուր բնակավայրում նախատեսնվում է կառուցել 567 աշակերտ/տեղ հզորության հանրակրթական նոր դպրոց, որի պատվիրատուն է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

Հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար համայնքի ավգանու 2024 թվականի նոյեմբերի 28-ի **N 148-Ա** որոշմամբ հատկացվել և Հայաստանի Հանրապետությանն է նվիրաբերվել 08-100-0065-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0. 953701 հեկտար հողամաս:

Համայնքապետարան է դիմել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագիրը համակարգող մասնագետները, հնարավորության սահմաններում դպրոցի կառուցման համար նախատեսված հողամասը ընդլայնելու առաջարկությամբ:

Որոշման նախագծով նախատեսվում է Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-100-0065-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գուրծառնական նշանակության 0. 10450 հեկտար հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, համայնք Անի, գյուղ Սառնաղբյուր, 9-րդ փողոց 2/1 հողամաս, Վկայական N 29102025-08-0062/ նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը /հետագայում՝ Նվիրառու/՝ Սառնաղբյուր բնակավայրում հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար հատկացված և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերված 08-100-0065-0002 կադաստրային ծածկագրով 0. 953701 հեկտար հողամասի ընդլայնման համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 207-րդ կետը:

Քննարկման արդյունքում կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքում, որոշումն ընդունվեց:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ 0.953701 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-100-0065-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,10450 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 207-րդ կետը և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի առաջարկությունը՝ Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրում նախատեսված հանրակրթական դպրոցի կառուցման համար հատկացված հողամասը ընդլայնելու վերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-100-0065-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0. 10450 հեկտար հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, համայնք Անի, գյուղ Սառնաղբյուր, 9-րդ փողոց 2/1 հողամաս, Վկայական N 29102025-08-0062/ նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը /հետագայում՝ Նվիրառու/՝ Սառնաղբյուր բնակավայրում հանրակրթական նոր դպրոց կառուցելու համար հատկացված և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերված 08-100-0065-0002 կադաստրային ծածկագրով 0. 953701 հեկտար հողամասի ընդլայնման համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Նվիրառուի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | կողմ՝ | դեմ՝ | ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -----կողմ--- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -----կողմ-- | -------------- | -------------- |
| Մ. ԵՆՈՔՅԱՆ | քվեարկությանը չի մասնակցել | | |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | ----կողմ--- | -------------- | -------------- |

Նիստը վարող Էդգար Սաղաթելյանը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն հայտնվեց համայնքի ավագանու նիստին մասնակցելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ — ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ — ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԱՐՅԱՆ

<<30>> հոկտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ